# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ _58__

## ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«03» 03 2020թ.

ք.Կապան

ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ Կապանի պահպանության բաժինը, ի դեմս՝ բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Արտաշես Մարտիրոսյանի (այսուհետ՝ Պահպանություն) մի կողմից և ՀՀ կադաստրի կոմիտե, ի դեմս գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Գագիկ Եգանյանի (այսուհետ՝ Տնտմարմին) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Տնտմարմինը հանձնում, իսկ Պահպանությունը ընդունում է (իրականացնում է) Կապան քաղաքի Լեռնագործների 5ա/1 հասցեում գտնվող՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիքի մարզային ստորաբաժանման տարածքի պահպանությունը:
---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

նշել օբյեկտի անվանումը և հասցեն

1.2 Օբյեկտի պահպանության համար Պահպանությունը ձևավորում է ոստիկանության, ռազմականացված, <u>բռնող խմբի,</u> ծառայության միջոցով

Պահպանության հանձնվող ենթաօբյեկտների ցանկը և պահակետերի ընտրությունը կատարվում է պայմանադիր կողմերի փոխադարձ համաձայնությամբ և հետագայում միակողմանիորեն փոփոխման ենթակա չէ (ցանկը կցվում է պայմանագրին և հանդիսանում է նրա բաղկացուցիչ մասը):

1.3.Պահպանության կողմից յուրաքանչյուր օբյեկտ, ենթաօբյեկտ, առանձին շենք, սենյակ կամ պահատեղ պահպանության ընդունելու, դրանք Տնտմարմնին հանձնելու, դրանց տարածքում հասարակական կարգ ապահովելու կամ անցագրային ռեժիմ իրականացնելու կարգն ամրագրվում է սույն պայմանագրով, նշելով.

<u>Պահպանությունը իրականացվում է աշխատանքային օրերին՝ ժամը 18:00-ից մինչև 09:00-ն, ոչ աշխատանքային, տոնական, հիշատակի օրերին շուրջօրյա՝ ՊՊԳՎ մոնիտորինգի կենտրոնի /ՄԿ/ միջոցով:</u>

1.4.Պայմանագիրն իր հավելվածով կազմվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

### 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

2.1.Մատուցված ծառայությունների համար Տնտմարմինը վճարում է պահպանության վարձ՝ ամսեկան 85.000 /ութսունհինգ հազար/ դրամի չափով:

2.2.Վարձի վճարումները Տնտմարմինը կատարում է ամեն ամիս՝ մինչև հաջորդ ամսվա հինգը ներառյալ:

2.3.Պահպանության համակարգի աշխատակիցների աշխատավարձի, ինչպես նաև զինծառայողների հատուկ կոչումների դրույքաչափերի փոփոխման դեպքում՝ պայմանադիր կողմերը փոխադարձ համաձայնությամբ վերահաշվարկվում են պայմանագրային ամսեկան գումարի չափը, որի մասին պայմանագրում կատարվում է համապատասխան փոփոխություն:

### 3.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### <u>*3.1 ՏՆՏՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*</u>

3.1.1.Ստեղծել անհրաժեշտ պայմաններ Պահպանության կողմից օբյեկտների պահպանությունը և նրա տարածքում հասարակական կարգի ապահովումը պատշաճ կատարելու համար:

<u>Փակել</u>, կնքել (կապարակնքել) հիմնական և օժանդակ դռները, միացնել, ստուգել անվտանգության համակարգը
---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------և կատարել դրանց

մուտքի , սենյակի, պահեստի պահատեղերի հիմնական և օժանդակ դռները, պատուհաններն ու այլ անհրաժեշտ տեղերը ըստ ցանկի

ընդունում-հանձնում մոնիտորինգի կենտրոնին այդ վիճակում: Անվտանգության սարքավորումների տեխնիկական անսարքության հայտնաբերման դեպքերում կապ հաստատել նաև ոստ.Կապանի պ/բ-ի /0285/ 2-01-02, 094-67-01-02, 041-00-70-99 հեռախոսահամարներով, ապահովել ներկայացուցիչ՝ մինչև ,,Տնտմարմնի,, կողմից տեխնիկական անսարքության վերացումը:

3.1.2.Միջոցներ ձեռնարկել օբյեկտի տեխնիկական ամրացվածության վիճակի հետազոտման մասին կազմված ակտերում արձանագրված թերությունները նախատեսված ժամկետներում վերացնելու ուղղությամբ:

3.1.3. Պահպանության հետ համատեղ, տարեկան ոչ պակաս երկու անգամ կազմակերպել Տնտմարմնի շենքի և շինությունների տեխնիկական ամրապնդվածության, դրանցում տեղադրված անվտանգության համակարգի վիճակի, ինչպես նաև պայմանագրով նախատեսված մյուս պարտականությունների կատարման ստուգումներ:
Ստուգման արդյունքներով կազմվում է ակտ, որում մատնանշված թերություններն ենթակա են պարտադիր կատարման:

3.1.4.Պահպանությանը տեղյակ պահել օբյեկտում թանկարժեք մետաղների և քարերի, դրանցից պատրաստված արտադրանքի, դրամական միջոցների և արժեթղթերի, հնաոճ իրերի, զենքի, ռազմամթերքի, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի առկայության մասին, իսկ պահելու դեպքում համաձայնեցնել ,,պահպանության,, հետ:

3.1.5. Սահմանված ժամին օբյեկտը պահպանության հանձնելիս միացնել նյութական արժեքների պահատեղերի պահպանության ահազանգման միջոցները /եթե այդպիսիք կան/, դրանց անսարքության մասին անհապաղ հայտնել Պահպանությանը և չթողնել օբյեկտը՝ մինչև անսարքության վերացումն ու սույն պայմանագրով նախատեսված կարգով այն Պահպանության հանձնելը:

3.1.6.Օբյեկտի ամբողջականության խախտման նշանների, ինչպես նաև անվտանգության սարքավորումների տեխնիկական անսարքության հայտնաբերման դեպքերում, Պահպանության պահանջով. ոչ աշխատանքային ժամերին ներկայանալ այնտեղ՝ ի հայտ եկած թերությունները պարզելու և դրանք վերացնելու համար:

3.1.7.Օբյեկտում անցագրային և ներօբյեկտային ռեժիմ սահմանելու դեպքում Պահպանության հետ համատեղ հաստատել դրա կիրառման կարգը:

3.1.8.Պահպանությունից օբյեկտն ընդունելիս հանցագործության կատարման կամ նրա ամբողջականության խախտման կասկած հարուցող հետքերի և նշանների առկայության մասին անմիջապես հայտնել Պահպանությանը:

3.1.9.Պահպանությանը մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնել պայմանագիրը միակողմանի դադարեցնելու, ինչպես նաև օբյեկտի, հիմնական վերանորոգման և վերասարքավորման, սահմանված ռեժիմի, գործունեության ուղղությունների փոփոխման կամ այնպիսի միջոցառումների անցկացման մասին, որոնց հետևանքով հնարավոր է օբյեկտի պահպանության բնույթի փոփոխության կամ պահակետերի վերաբաշխման անհրաժեշտությունը:

3.1.10.Պայմանագրի լուծման դեպքում 5-օրյա ժամկետում կատարել Պահպանությանը ունեցած պարտքերի մարումը, ինչպես նաև՝ սույն պայմանագրի 3.1.9. կետի պահանջների խախտմամբ պայմանագիրը դադարեցնելու հետ կապված բոլոր ծախսերի վճարումը:

3.1.11.Սարքավորել և բարվոք վիճակում պահել ծառայողական շներին հատկացված շինությունները և պահակետերը, եթե պայմանագրով նրանց ծառայության մեջ ընդգրկելը նախատեսված է:

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ _58__

### ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«03» 03 2020թ.

ք.Կապան

ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ Կապանի պահպանության բաժինը, ի դեմս՝ բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Արտաշես Մարտիրոսյանի (այսուհետ՝ Պահպանություն) մի կողմից և ՀՀ կադաստրի կոմիտե, ի դեմս գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Գագիկ Եգանյանի (այսուհետ՝ Տնտմարմին) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Տնտմարմինը հանձնում, իսկ Պահպանությունը ընդունում է (իրականացնում է) Կապան քաղաքի Լեռնագործների 5ա/1 հասցեում գտնվող՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիքի մարզային ստորաբաժանման տարածքի պահպանությունը:

------------------------------------------------------------------------------------------------

*նշել օբյեկտի անվանումը և հասցեն*

1.2 Օբյեկտի պահպանության համար Պահպանությունը ձևավորում է ոստիկանության, ռազմականացված, <u>բռնող խմբի,</u> ծառայության միջոցով

Պահպանության հանձնվող ենթաօբյեկտների ցանկը և պահակետերի ընտրությունը կատարվում է պայմանադիր կողմերի փոխադարձ համաձայնությամբ և հետագայում միակողմանիորեն փոփոխման ենթակա չէ (ցանկը կցվում է պայմանագրին և հանդիսանում է նրա բաղկացուցիչ մասը):

1.3.Պահպանության կողմից յուրաքանչյուր օբյեկտ, ենթաօբյեկտ, առանձին շենք, սենյակ կամ պահատեղ պահպանության ընդունելու, դրանք Տնտմարմնին հանձնելու, դրանց տարածքում հասարակական կարգ ապահովելու կամ անցագրային ռեժիմ իրականացնելու կարգն ամրագրվում է սույն պայմանագրով, նշելով.

<u>Պահպանությունը իրականացվում է աշխատանքային օրերին՝ ժամը 18:00-ից մինչև 09:00-ն, ոչ աշխատանքային, տոնական, հիշատակի օրերին շուրջօրյա՝ ՊՊԳՎ մոնիտորինգի կենտրոնի /ՄԿ/ միջոցով:</u>

1.4.Պայմանագիրն իր հավելվածով կազմվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

### 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

2.1.Մատուցված ծառայությունների համար Տնտմարմինը վճարում է պահպանության վարձ՝ ամսեկան 85.000 /ութսունհինգ հազար/ դրամի չափով:

2.2.Վարձի վճարումները Տնտմարմինը կատարում է ամեն ամիս՝ մինչև հաջորդ ամսվա հինգը ներառյալ:

2.3.Պահպանության համակարգի աշխատակիցների աշխատավարձի, ինչպես նաև զինծառայողների հատուկ կոչումների դրույքաչափերի փոփոխման դեպքում՝ պայմանադիր կողմերը փոխադարձ համաձայնությամբ վերահաշվարկվում են պայմանագրային ամսեկան գումարի չափը, որի մասին պայմանագրում կատարվում է համապատասխան փոփոխություն:

### 3.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### <u>*3.1 ՏՆՏՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*</u>

3.1.1.Ստեղծել անհրաժեշտ պայմաններ Պահպանության կողմից օբյեկտների պահպանությունը և նրա տարածքում հասարակական կարգի ապահովումը պատշաճ կատարելու համար:

<u>Փակել</u>, կնքել (կապարակնքել) հիմնական և օժանդակ դռները, միացնել, ստուգել անվտանգության համակարգը

------------------------------------------------------------------------------------------------և կատարել դրանց

*մուտքի , սենյակի, պահեստի պահատեղերի հիմնական և օժանդակ դռները, պատուհաններն ու այլ անհրաժեշտ տեղերը ըստ ցանկի*

ընդունում-հանձնում մոնիտորինգի կենտրոնին այդ վիճակում: Անվտանգության սարքավորումների տեխնիկական անսարքության հայտնաբերման դեպքերում կապ հաստատել նաև ոստ.Կապանի պ/բ-ի /0285/ 2-01-02, 094-67-01-02, 041-00-70-99 հեռախոսահամարներով, ապահովել ներկայացուցիչ՝ մինչև ,,Տնտմարմնի,, կողմից տեխնիկական անսարքության վերացումը:

3.1.2.Միջոցներ ձեռնարկել օբյեկտի տեխնիկական ամրացվածության վիճակի հետազոտման մասին կազմված ակտերում արձանագրված թերությունները նախատեսված ժամկետներում վերացնելու ուղղությամբ:

3.1.3. Պահպանության հետ համատեղ, տարեկան ոչ պակաս երկու անգամ կազմակերպել Տնտմարմնի շենքի և շինությունների տեխնիկական ամրապնդվածության, դրանցում տեղադրված անվտանգության համակարգի վիճակի, ինչպես նաև պայմանագրով նախատեսված մյուս պարտականությունների կատարման ստուգումներ:

Ստուգման արդյունքներով կազմվում է ակտ, որում մատնանշված թերություններն ենթակա են պարտադիր կատարման:

3.1.4.Պահպանությանը տեղյակ պահել օբյեկտում թանկարժեք մետաղների և քարերի, դրանցից պատրաստված արտադրանքի, դրամական միջոցների և արժեթղթերի, հնաոճ իրերի, զենքի, ռազմամթերքի, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի առկայության մասին, իսկ պահելու դեպքում համաձայնեցնել ,,պահպանության,, հետ:

3.1.5. Սահմանված ժամին օբյեկտը պահպանության հանձնելիս միացնել նյութական արժեքների պահատեղերի պահպանության ահազանգման միջոցները /եթե այդպիսիք կան/, դրանց անսարքության մասին անհապաղ հայտնել Պահպանությանը և չթողնել օբյեկտը՝ մինչև անսարքության վերացումն ու սույն պայմանագրով նախատեսված կարգով այն Պահպանության հանձնելը:

3.1.6.Օբյեկտի ամբողջականության խախտման նշանների, ինչպես նաև անվտանգության սարքավորումների տեխնիկական անսարքության հայտնաբերման դեպքերում, Պահպանության պահանջով. ոչ աշխատանքային ժամերին ներկայանալ այնտեղ՝ ի հայտ եկած թերությունները պարզելու և դրանք վերացնելու համար:

3.1.7.Օբյեկտում անցագրային և ներօբյեկտային ռեժիմ սահմանելու դեպքում Պահպանության հետ համատեղ հաստատել դրա կիրառման կարգը:

3.1.8.Պահպանությունից օբյեկտն ընդունելիս հանցագործության կատարման կամ նրա ամբողջականության խախտման կասկած հարուցող հետքերի և նշանների առկայության մասին անմիջապես հայտնել Պահպանությանը:

3.1.9.Պահպանությանը մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնել պայմանագիրը միակողմանի դադարեցնելու, ինչպես նաև օբյեկտի, հիմնական վերանորոգման և վերասարքավորման, սահմանված ռեժիմի, գործունեության ուղղությունների փոփոխման կամ այնպիսի միջոցառումների անցկացման մասին, որոնց հետևանքով հնարավոր է օբյեկտի պահպանության բնույթի փոփոխության կամ պահակետերի վերաբաշխման անհրաժեշտությունը:

3.1.10.Պայմանագրի լուծման դեպքում 5-օրյա ժամկետում կատարել Պահպանությանը ունեցած պարտքերի մարումը, ինչպես նաև՝ սույն պայմանագրի 3.1.9. կետի պահանջների խախտմամբ պայմանագիրը դադարեցնելու հետ կապված բոլոր ծախսերի վճարումը:

3.1.11.Սարքավորել և բարվոք վիճակում պահել ծառայողական շներին հատկացված շինությունները և պահակետերը, եթե պայմանագրով նրանց ծառայության մեջ ընդգրկելը նախատեսված է:

3.1.12. ժամանակին կատարել Պահպանությանը հասանելիք վճարումները:
3.1.13.Իրականացնել պահպանության ազդանշանային միջոցների /անվտանգության տեխնիկական սարքավորումների/ սպասարկման և անսարքությունների վերացման աշխատանքներ

### 3.2.ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.2.1.Կազմակերպել և ապահովել Տնտմարմնի կողմից իր պահպանությանը հանձնված օբյեկտների հուսալի պահպանությունը հափշտակումներից և վնասումներից:
3.2.2.Սահմանված կարգով Տնտմարմնից ընդունել օբյեկտը՝ սույն պայմանագրի 3.1.1. կետի համապատասխան:
3.2.3. Պահպանվող օբյեկտների փակ պահատեղերում հրդեհի նշանների հատնաբերման կամ պահպանության հրդեհային ազդանշաններից ստացված տագնապի մասին անհապաղ հայտնել հրդեհային հսկողությանը և Տնտմարմնին:
3.2.4.Ապահովել անցագրային ռեժիմի կիրառումը, եթե այդպիսին՝ սահմանված է:
3.2.5.Ստանձնած պարտավորությունները կատարել միայն իր ուժերով:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1.Պահպանությունն իրավունք ունի.
ա/ Տնտմարմնից պահանջել ապահովելու սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ժամանակին և պատշաճ կատարումը:
բ/ Տնտմարմնի կողմից պարտավորությունների պարբերաբար խախտման դեպքում միակողմանի դադարեցնել պայմանագիրը:
գ/ Տնտմարմնից պահանջել կատարելու օբյեկտի հետազոտման ակտերում նշված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները:
դ/Գողությամբ կամ այլ ոտնձգություններով Տնտմարմնին պատճառած նյութական վնասի չափը որոշելու համար մասնակցել ապրանքանյութական արժեքների մնացորդների հաշվարկման և դրանք դեպքի կատարման օրվա հաշվապահական տվյալների հետ համեմատելու աշխատանքներին:
4.1.2. Տնտմարմինն իրավունք ունի.
ա/Պահպանությունից պահանջել կատարելու սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը:
բ/ Ցանկացած ժամերին ստուգել Պահպանության կողմից ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:
գ/Պահպանության կողմից պարտավորությունների պարբերաբար խախտման դեպքում միակողմանի դադարեցնել պայմանագիրը:
դ/Պահպանության իրավասու ներկայացուցչի հետ օրվա ցանկացած ժամի ստուգել ծառայության իրականացումը, հետևել «Տագնապ» ազդանշանով վերակարգերի կողմից իրականացվող միջոցառումներին:
4.2.Պահպանության պատասխանատվության պահը սկսվում է Տնտմարմնից օբյեկտը սահմանված կարգով պահպանության ընդունելու և ավարտվում է այն ամբողջական վիճակում Տնտմարմնին հանձնելու պահով:
4.2.1.Պահպանությունը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ պահպանություն չիրականացնելու հետևանքով հասցվել է Տնտմարմնին՝ օբյեկտի պարիսպը, շենքերի պատերը, պահատեղերը քանդելու, դռները, պատուհանները, դրանց փականներն ու կողպեքները ջարդելու միջոցով կատարված հափշտակությամբ, գույքի ոչնչացմամբ,փչացմամբ :

## 5.ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

5.1.Պահպանությունը պատասխանատվություն չի կրում.
ա/տարերային աղետների հետևանքով պատճառված նյութական վնասի համար:
բ/բանդիտական կամ ավազակային հարձակման հետևանքով պատճառված վնասի համար, եթե քննությամբ կապացուցվի, որ այն կանխելու հնարավորություն Պահպանությունը չի ունեցել:

## 6.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1.Պահպանությունը պատասխանատվություն չի կրում.
6.1.1 Այն նյութական արժեքների ամբողջության համար, որոնք չեն գտնվել փակ շինություններում և սահմանված կարգով Պահպանությանը հանձնված չեն եղել:
6.1.2 Տնտմարմնի աշխատակիցների անձնական իրերի և այն նյութական արժեքների կորուստի համար, որոնք աշխատանքի ավարտից հետո պետք է պահվեին հատուկ պահատեղերում, սակայն թողնվել են աշխատատեղերում:
6.1.3 Այն վնասի համար, որն առաջացել է Տնտմարմնի կողմից սույն պայմանագրի 3.1.1, 3.1.2, 3.1.5, 3.1.6, 3.1.8, 3.1.9 կետերով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով:
6.1.4 Այն վնասի համար, որի հաշվարկը Տնտմարմնը կատարել է սույն պայմանագրի 7.2 կետի պահանջների խախտումով:
6.2 Տնտմարմինը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի 4.1.2. կետի «գ» ենթակետի կարգով պայմանագիրը միակողմանիորեն դադարեցնելու հետ կապված Պահպանությանը պատճառվելիք վնասի համար:

## 7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1.Սույն պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագած վիճելի հարցերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված կարգով:
7.2.Գողության կամ այլ ոտնձգությունների հետևանքով Տնտմարմնի գույքը հափշտակելու, ոչնչացնելու կամ վնաս պատճառելու դեպքում կողմերը կատարում են օբյեկտի համատեղ գույքագրում և պատճառված վնասի հաշվարկ: Միակողմանի կատարված գույքագրումը կամ վնասի հաշվարկը իրավաբանական ուժ չունի:
7.3.Հափշտակված և հետագայում հայտնաբերված ապրանքանյութական արժեքները վերադարձվում են Տնտմարմնին:
Վերադարձված ապրանքանյութական արժեքների գինը հանվում է Տնտմարմնի կողմից դրանց դիմաց նախապես հաշվարկված գնից, իսկ Պահպանության կողմից վճարված գումարները ենթակա են վերադարձման:
7.4.Նյութական վնասի հատուցման մասին պահանջը քննարկվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում:
7.5.Նյութական վնաս պատճառելու Պահպանության մեղքի առկայությունը և հասցված վնասի չափը որոշվում է իրավասու մարմինների կողմից և փոխհատուցվում փաստի հիման վրա հարուցված քրեական գործի ավարտով՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

## 8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մոնիտորինգի կենտրոնին ,,Տագնապ,, ազդանշան ստանալուց բռնող խումբը օբյեկտ կժամանի 3-5 րոպեի ընթացքում:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9.1.Սույն պայմանագիրը կնքված է մեկ տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում ,,01,, 01 2020թ.-ից.:
9.2.Եթե պայմանագրի ժամկետը լրացել է և կողմերից ոչ մեկը չի պահանջում դրա դադարեցում, ապա պայմանագիրը համարվում է անորոշ ժամկետով կնքված, որից հետո կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է պահանջել դրա դադարեցում՝ մեկ ամիս առաջ տեղեկացնելով մյուս կողմին:
9.3.Պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել սույն պայմանագրի 4.1. կետի «բ» և 4.1.2. կետի «գ» ենթակետերում նշված հիմունքներով:
9.4.Այլ պատճառով օբյեկտի պահպանության մասին պայմանագիրը ժամկետից շուտ լուծել թույլ է տրվում օրենքով նախատեսված կարգով կամ կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐՆ ՈՒ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ

Պահպանություն՝ *ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Կապանի պահպանության բաժին, ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Երկաթուղայինների 4, հեռ. /0285/ 2-66-25, հ/հ 900313099013, կենտրոնական գանձապետարան , ՀՎՀՀ ՝ 09401235*

Տնտեսական մարմին ՝ *ՀՀ կադաստրի կոմիտե*
*ք. Երևան, Արշակունյաց 7*
*հ/հ 900311001276 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն*
*ՀՎՀՀ՝ 02534328*

«ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

*ՀՀՈ ՊՊԳՎ Կապանի պահպանության բաժնի*

*պետ, ոստիկանության փոխգնդապետ՝*

______________________________ *Ա. Մարտիրոսյան*

«ՏՆՏՄԱՐՄԻՆ»

*ՀՀ կադաստրի կոմիտեի գլխավոր*

*քարտուղարի ժ/պ՝*

______________________________ *Գ. Եգանյան*